

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՈՍԲՈՒՆՈՒՄ V - XVIII ՂԴ. ՀԱՅ ԶԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ԱՇԽ. Լ. ՅՈՒՐԲԱՇԵԱՆ

Գրաբարի բայի եղանակաժամանակային հարացույցում ուրույն տեղ է գրավում հրամայական եղանակը: Իբրև բայական հարացույցի մաս՝ այն ներկայացվել է հայ և օտարազգի քերականների աշխատություններում: Սակայն նրանցում կատարվող վերլուծությունները հարցի առանձին դիտարկումներ են միայն: Գրաբարի բայի հրամայական եղանակը կարիք ունի ավելի մանրակրկիտ, առանձնակի և ամբողջական ուսումնասիրության:

Հրամայական եղանակի՝ ձևախմբաստային առումով կայուն բայաձևերը բազմակերպ են ներկայացվել հայ քերականագիտության պատմության մեջ:

Հայ քերականագիտությունն՝ սկսվում է Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» գրքի հայերեն թարգմանությամբ: Դ. Թրակացու թարգմանիչը հայերենի համար ընդունել է նույն եղանակներն ու ժամանակները, ինչը Թրակացին նշել է հունարենի համար: «Յադագս բայի» գլխում բայի համար զանազանվում է հինգ եղանակ՝ «Եւ խոնարհմունք»¹ են հինգ. սահմանական, աներտոյթ, հրամայական, ըղձական, ստորադասական²: Ներկա, ապառնի, անսահմանական, «յարածգական, յարական» ժամանակները վերագրվում են ինչպես բոլոր եղանակներին, այնպես էլ հրամայականին: Իրողություն, որ, բնութագրական լինելով հունարենին, օտար էր հայերենի բայական իրական համակարգին: Ուստի թարգմանիչը պետք է բայական հարացույցում ներկայացներ արհեստական կառույցներ՝ ստեղծված հունարենի մանողությամբ:

Դ. Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատության մեկնիչներ Դավիթ փիլիսոփան, Անանու Մեկնիչը և Մովսես Քերթոզը «խոնարհմունք» անվանումով բայի համար հիշատակում են թարգմանչի կողմից ներկայացրած հինգ եղանակները՝ և վկայակոչում համապատասխան բայաձևեր: Հրամայական եղանակի համար նրանք նշում են միայն բուն՝ հրամայականի կառույցներ (*կոփեա՛, արա՛*)³: Սա արդեն դրական

¹ Հայտնի է գրաբարի ուսումնասիրության երեք շրջան. հունաստիպ, լատինաստիպ և ինքնուրույն քերականությունների շրջաններ: Մանրամասն տե՛ս Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 11-26: Մենք քննությունը կատարելու ենք ըստ այս շրջանների և նրանց համար զանազանված ենթադասերի, որոնց մասին տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974:

² Ա. Մուրադյանը «Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում» (Եր., 1971) աշխատության մեջ, ի թիվս այլ քերականական եզրերի, անդրադառնում է նաև «խոնարհումն, խոնարհութիւն և ներխոնարհութիւն» եզրերի (որ պատճենում են հունարենից) գործածությանը: Նա նշում է, որ «*ΕΥΚΛΙΣΙΣ*» «ներխոնարհութիւն» եզրը Դիոնիսիոսը գործածում է առավելապես բայի խոնարհում և եղանակ իմաստով (տե՛ս էջ 254-255): Թարգմանիչը ևս այս եզրը գործածում է բայի եղանակը նշելու համար (տե՛ս էջ 254-258): «խոնարհմունք» եզրը համապատասխանում է հուն. բնագրի «*ΕΥΚΛΙΣΙΣ*» եզրին (տե՛ս էջ 254-255):

³ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 22.

⁴ Մովսես Քերթոզը գրում է. «խոնարհմունքս հինգ են», բայց թվարկում է չորսը՝ չնշելով ըղձականը: Տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 173:

⁵ Բուն, արգելական հրամայականներ, ստորադասական եղանակի առաջին և երկրորդ ապառնիներ եզրերը գործածում ենք արդի ըմբռնմամբ:

⁶ Տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 146, 173:

բայլ էր, քանի որ թարգմանչի ներկայացրած՝ գրաբարի հետ կապ չունեցող ձևերը նրանց կողմից չեն հիշատակվում՝:

Գ. Թրակացու քերականության հաջորդ մեկնիչներ Ստեփանոս Սյունեցի⁸ և Համամ Արևելից⁹ նախորդների մասն իբրև հրամայականի ձևեր հիշատակում են բուն հրամայականի կառույցները: Համամ Արևելցին, ձևերի պարզ թվարկումից բացի, առաջին անգամ տալիս է նաև հրամայական եղանակի իմաստային բնութագիրը՝ «Հրամանեան՝ գործեա՛, գրեա՛, որպէս ի տեսողնէ հրամանէ կամ յումբըէ»¹⁰:

11-15-րդ դարերի մեկնություններում գրաբարի բայի համար շարունակվում է տարբերակվել հինգ եղանակ: Գր. Մագիստրոսի «Մեկնութիւն քերականի»¹¹ աշխատություն մեջ, որը «Թրակացու քերականության հայերեն թարգմանության վերը հիշատակված բոլոր մեկնությունների բանաբաղություն է որոշ փոփոխություններով և հավելումներով»¹², մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ որևէ նոր բան չենք գտնում:

Վ. Արևելցին հեղինակ է քերականական երկու աշխատությունների՝ «Վասն բանին մասանց», և «Մեկնութիւն քերականի», որը Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանության մեկնությունն է:

Հեղինակի «Վասն բանին մասանց» երկու էջանոց աշխատության մեջ ինչպես մյուս խոսքի մասերը, այնպես էլ բայը ստանում է շարահյուսական բնորոշում. «Յետ անուան բայ է, որ զանունն և զգործն ցուցանէ, որպէս ասել թորոս դարպաս շինեաց»¹³: Իսկ «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ բայը սահմանվում է որպես «բառ անհոլով, ընդունական ամանակաց, դիմաց և թոնոց, որ ներգործութիւն և կիր յարկացուցէ»¹⁴: Բայի համար նշելով հինգ եղանակ՝ հրամայականի մասին գրում է. «Իսկ հրամանեան՝ յորժամ հրամայես՝ կոփես»¹⁵:

Հովհ. Երզնկացու «Հաւաքումն մեկնութեան քերականի» աշխատության մեջ հրամայականի համար՝ «եզ.՝ սիրեա՛, սիրէ, բազմ.՝ սիրէք, սիրեն կամ սիրեցէք, սիրեսցեն» ձևերի հետ կրավորական խոնարհման համար նշվում են՝ «եզ.՝ սիրուիր, սիրուի, բազմ.՝ սիրուիք, սիրուին» ձևերը¹⁶, որոնք ժամանակի խոսակցական լեզվին բնորոշ կառույցներ են: «Կրավորականի համար այստեղ օգտագործված է աշխարհաբարին անցած վ(ու) մասնիկը»¹⁷:

Եսայի Նչեցու «Վերլուծութիւն քերականութեան» աշխատության մեջ իբրև հրամայականի օրինակներ հիշվում են բուն հրամայականի ձևերը՝ «կոփես, գործես, գրես»¹⁸: Գ. Զահուկյանը ավելի բարձր է գնահատում նրան վերագրվող աղյուսակը («Արծարծմունք խոնարհմանց բայից»), որը բերում է Ն. Աղոնցն իր հայտնի աշխատության մեջ¹⁹: Աղյուսակում խոնարհված է աղաթել բայը: Բային տրվում է երկու եղանակ՝ աղաթական (սահմանական) և ըղձական: Ստորադասականը միացվում է ըղձականին, իսկ հրամայականը բացակայում է. այն հավանաբար հեղինակը «բացատրության

⁸ Թարգմանչի կողմից հայերենի բային վերագրվող երկակի թիվն իր բայաձևերով մեկնիչների կողմից չի հիշատակվում:

⁹ Н. Адонц, *ՈՂՎ. աշխ.*, էջ 212:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 261:

¹¹ Նույն տեղում:

¹² Տե՛ս Գրիգոր Մագիստրոս, *Մեկնութիւն քերականի, Н. Адонц, Дионисий Фракийский и его толкователи*, էջ 249:

¹³ Հ. Բարսեղյան, *Հայերենի խոսքի մասերի ուսմունքը*, Եր., 1980, էջ 34:

¹⁴ Վարդան Արևելցի, *Վասն բանին մասանց, «Տեղեկագիր» ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի*, 1943, No 24, էջ 86:

¹⁵ Վարդան Արևելցի, *Մեկնութիւն քերականի*, Եր., 1972, էջ 123:

¹⁶ Նույն տեղում, էջ 124:

¹⁷ Յովհաննէս Երզնկացի, *Հաւաքումն մեկնութեան քերականի*, Լոս Անճելէս, 1983, էջ 228-229:

¹⁸ Գ. Զահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, էջ 279:

¹⁹ Եսայի Նչեցի, *Վերլուծութիւն քերականութեան*, Եր., 1966, էջ 129:

²⁰ Տե՛ս Ն. Աղոնց, *ՈՂՎ. աշխ.*, էջ 65:

կարող չի համարում»²⁰։ Եղանակի քերականական կարգի ըմբռնման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում Հովհաննես Քոնեցու (14-րդ դար) «Համառոտ հաւաքումն յաղագս քերականի» աշխատությունը։ Ի հակադրություն նախորդների, որ բավարարվում էին եղանակների և եղանակաժամանակային ձևերի պարզ թվարկումով, Քոնեցին եղանակի քերականական կարգին տալիս է որոշակի սահմանում. «Ճայն, որ ցուցանէ զախորժակ սրտին»²¹, այսինքն՝ նրա միջոցով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը։ Նա եղանակը կերպ է անվանում և կատարյալ է համարում այն կերպը, որի մեջ առավել ամբողջական է արտահայտվում դեմքը, թիվը, ժամանակը։ Այս տեսանկյունով էլ բնութագրում է իր առանձնացրած եղանակները։ Քոնեցին հրամայականի մասին գրում է. «Արդ հրամականն ոչ ցուցանէ զամենայն ժամանակս և ոչ զամենայն դէմս, այլ միայն զապառնին ի յերկու դէմս՝ եզական և բազմաւորական. հիզան սիրեա՛, սիրեսցէ (նոյնպէս և բազմաւորական)»²²։

Քոնեցին հրամայական եղանակին բնորոշ է համարում մեկ ժամանակ՝ ապառնի։ Սա հրամայական եղանակին բնութագրական այն ճշգրիտ ընկալումն է, որ չի պահպանվելու հետագա քերականների կողմից դարեր շարունակ։ Ստորադասական երկրորդ ապառնու III դեմքի բայաձևերը հեղինակը ներկայացնում է իբրև հրամայական եղանակի III դեմքի ձևեր (եզակի և հոգնակի թվերի համար)։

Առաքել Սյունեցու «Թաղագս քերականութեան ...»²³ աշխատության մեջ, որ գրված է հարց ու պատասխանի ձևով, հրամայականի մասին որևէ նոր բան չենք գտնում։ Հարց ու պատասխանի ձևով է գրել նաև Դավիթ Ջեյթունցին (16-17 -րդ դդ.) իր «Մեկնութիւն քերականի» աշխատությունը։ Կատարելով արժեքավոր դիտողություններ մյուս եղանակների վերաբերյալ՝ Ջեյթունցին նույնպես հրամայականի մասին ոչինչ չի ասում, բացի «գրեա՛, կարդա՛» բայաձևերը²⁴ վկայակոչելուց։

Ամփոփելով հունատիպ քերականությունների շրջանի աշխատություններում ներկայացված հայերենի եղանակաժամանակային հարացույցներում հրամայական եղանակի և նրա համար առանձնացված բայաձևերի մասին հունարան քերականների մոտեցումները՝ նշենք.

1. Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատության թարգմանիչը հունարենի հետևողությամբ բայի համար նշում է հինգ եղանակ՝ սահմանական, աներելոյթ, հրամայական, ըղձական, ստորադասական. իրողություն, որ պահպանում են ոչ միայն V դարի, այլև հետագա մեկնիչները։ Հրամայական եղանակը ստացել է հրամայական, հրամանեան, հրամական անվանումները։ Եղանակի քերականական կարգի բնորոշման փորձ է արել Հովհաննես Քոնեցին միայն, մյուսները բավարարվել են նրանց պարզ թվարկումով և համապատասխան բայաձևերի վկայակոչմամբ։

Համամ Արևելյիցի փորձում է տալ նաև հրամայականի իմաստային բնութագիրը՝ իբրև «սիրողից կամ ինչ-որ մեկից հրամայված գործողություն»։

2. Եթե թարգմանիչը հունարենի նմանությամբ բոլոր եղանակներին, այդ թվում նաև հրամայականին, բնորոշ է համարում -ներկա, ապառնի, անսահմանական, յարաձգական, յարակալ» ժամանակները, ապա մեկնիչները մինչև Հովհ. Երզնկացին վկայակոչում են բուն հրամայականի բայաձևերը։ Հովհաննես Երզնկացուց սկսած՝ ստորադասական երկրորդ ապառնու III դեմքի բայաձևերը բուն հրամայականի բայաձևերի հետ ներկայացվում են հրամայականի հարացույցում։

²⁰ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 288, աղյուսակի մանրամասն վերլուծությունը տե՛ս 286-291 էջերում։

²¹ Ծովհաննէս Քոնեցի, Թաղագս քերականին, Եր., 1977, էջ 177։

²² Նույն տեղում։

²³ Տե՛ս Առաքել Սիւնեցի, Թաղագս քերականութեան համառոտ լուծմունք, Լոս Անճելես, 1982, էջ 194-197։

²⁴ Մանրամասն տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, էջ 343-344, Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, էջ 65., Հ. Ավետիսյան, Գրաբարի ստորադասական եղանակը և նրա ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», No 1, 1985, էջ 198։

²⁵ Դավիթ Ջեյթունցի, Մեկնութիւն քերականի, Եր., 1981, էջ 131։

դ) Հրամայականի կազմության վերաբերյալ Գալանոսն ունի որոշակի դիտողություններ: Այսպես՝ 1) *-եսց* -ով ձևերը արդեն կարող են հանդես գալ *-ես* -ով, ինչպես «ողորմեաց-ողորմեա, նայեաց-նայեա, խոտորեաց-խոտորեա, խորհեաց-խորհեա նաև խորհիր»¹¹: Սա հրամայականի կազմության մուրբ կանոններից մեկն է, որ չի վրիպել լեզվաբանի աչքից:

2) «բայ կրաւորականն յորժամ չեզոքապէս առնանի ի բանին, յայնժամ ի ներկայի հրամայականին՝ յեաց ևս աւարտի. որգոն. լուսաւորիմ-լուսաւորեաց, խոռվիմ-խոռվեաց ևն»¹² ...

Իսկ յորժամ կրաւորապէս առնանի՝ *յիր* անկանի. Հիրար խոռվիր, տնկիր, փոխիր, խլիր ևն»¹³:

3) Նա նշում է, որ որոշ բայերի համար «ի ներկայի հրամայականին ոչ-յացիր աւարտին, այլ... որպէս առաջին տեսակն. մոռանամ. մոռացայ. մոռա՛, ընթանամ. ընթացայ. ընթա՛, ցնծամ. ցնծ. -ցնծացայ, ցնծ-ա, յուսամ. յուսացայ, յուսա՛»¹⁴:

Հին հայերենում սա վերաբերում է միայն հուսալ և փութալ բայերին:

Ինչպես տեսնում ենք, դիտողություններում բերված օրինակներում տեղ են գտել ժամանակի խոսակցական լեզվին բնորոշ ձևեր:

Լատինատիպ-ուացիոնալիստական քերականությունների ներկայացուցիչներն են Ոսկան Երևանցին և Հովհաննես Կոստանդնուպոլսեցին (Հոլով):

Նրանց ներկայացրած բայական հարացույցների համեմատական քննությունից մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ կարող ենք անել հետևյալ դիտողությունները.

ա) բայի համար նրանք ընդունում են հինգ եղանակ՝ սահմանական (Ոսկանը կոչում է ցուցական), ստորադասական (Հոլովը կոչում է ստորակցական), ըղձական, հրամայական՝ հրամայականի համար նշելով ներկա և ապառնի ժամանակները¹⁵:

բ) Ոսկանը արգելական հրամայականի ձևեր չի նշում, իսկ Հոլովը Գալանոսի մեան բերում է նաև արգելական հրամայականի (*մի՛ սիրեր, մի՛ սիրէք*) ձևերը և ի տարբերություն Գալանոսի՝ *մի* ձևույթի հետ վկայակոչում է նաև ստորադասական առաջին ապառնու (*մի՛ սիրիցես, մի՛ սիրիցէ, մի՛ սիրիցեսք*) կառույցները:

գ) Երևանցին ներկայի և ապառնու համար վկայակոչում է նաև ստորադասական երկրորդ ապառնու III դեմքի բայաձևեր (*սիրեսցէ, սիրեսցեն*), իսկ հոգնակի ապառնու համար՝ նաև I դեմքի (*սիրեսցուք*) ձևը: Սա վկայակոչում է նաև Հոլովը (*սիրեսցուք, սիրեսցեն*): *Սիրեսցէ* ձևը, ի տարբերություն Ոսկանի և Գալանոսի, Հոլովը հատկացնում է սահմանական ապառնուն՝ չհատկացնելով հրամայական եղանակին: Իբրև հրամայական ապառնու ձևեր՝ հիշատակվում են *-ջիր, -ջիք*-ով կառույցները: *-իջիր, իջիք*-ով ձևերը հանդես են գալիս կրավորական խոնարհման հարացույցներում՝ իբրև հրամայական ապառնու կրավորական սեռի ձևեր: Ոսկան Երևանցին նշում է նաև III դեմքի (*սիրիջի, սիրիջի՞*) արհեստական ձևերը:

դ) Կրավորականի համար Հոլովը նշում է հիմնականում *ե>ի*-ով հնչյունափոխված կառույցներ (*սիրեսցուք-սիրիցուք, սիրեսցէք-սիրեսցիք*): Գալանոսը նույն կերպ էր վարվում. օրինակ՝ գովեսցուք-գովիցուք. ըստ որում ու լծորդության բայերի համար կրավորականը նշում է *ընթերցեալ լեր, ընթերցեալ լերուք* բաղադրյալ ձևերը, ինչպես նաև՝ *մի՛ ընթեռնուիր* արհեստական կառույցը:

Ինչպես տեսնում ենք, լատինատիպ ուացիոնալիստական քերականությունների ներկայացուցիչների ներկայացրած հարացույցներում հրամայականի կազմությունը ճշգրիտ արտահայտող բայաձևերը շատ ավելին են, բայց նրանցում տեղ են գտել բազմաթիվ արհեստական կառույցներ:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 81:

¹² Տե՛ս նույն տեղը:

☛ ¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 82:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 64:

¹⁵ Տե՛ս Ոսկան Երևանցի, Քերականութեան գիրք, լյՍմստերդամ, 1666, էջ 21-22: Հարացույց տե՛ս 79-109 էջերում. նաև՝ Ջուռթիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական շարադրեցեալ ի Յոհաննիստ վարդապետի Կոստանդինապոլսեցոյ, Հոռմ, 1674, հարացույցը տե՛ս 33-108 էջերում:

Հայ քերականագիտության մեջ հունալատիճատիպ քերականությունների ներկայացուցիչներն են Սիմեոն և Հովհաննես Ջուղայեցիները և Խաչատուր Կարնեցի (Արզրումեցի):

Սիմեոն Ջուղայեցի քերականագիտական իր աշխատությունը* գրել է 1637 թ., այսինքն՝ ավելի վաղ, քան Կղ. Գալանուր, Ոսկանը և Հովուլը, ուստի և նրանցում եղած ընդհանրությունների աղբյուրը պիտի համարել Ս. Ջուղայեցու «Գիրք, որ կոչի քերականութիւն ...» -ը³⁷:

Մեկնիչների մասն նա ընդունում է հինգ եղանակ³⁸, որ կոչում է «որակ»: Ս. Ջուղայեցին լծորդությունները քննում է իբրև «եղանակք», որոնք կոչվում են «նշան»: Հրամայականի համար ընդունում է հինգ «նշան»՝ *-ա*, *-եա*, *-եաց*, *-իր*, *-ո*: Ուն հատկացվում է ածանցավոր բայերին, *-իր* -ը՝ կրավորականներին, *-եաց*-ը՝ ընդմիջականներին և կրավորականներին: Ըստ այս երկու կարգի նշանների՝ տարբերվում են «հասարակականք» (կանոնավոր) և «կողմնականք» (անկանոն բայեր):

17-18 -րդ դարերի ականավոր գործիչ Հովհաննես Ջուղայեցու (Մրբուզ)³⁹ «Քերականութիւն...»⁴⁰ աշխատությունը իր ծանրակշիռ տեղն ունի հայ քերականագիտության մեջ: Նա բայի հատկանիշները բնութագրում է այնպես, ինչպես Սիմեոն Ջուղայեցին: Հրամայականի կազմության հետ կապված *ե* և *ու* լծորդության (եղանակ) բայերի համար կատարում է հետևյալ դիտողությունը. «Իսկ յործան հասանիցիս ի հրամայականն, հայեաց ի սահմանականին ներկայն, եթէ ներգործակերպ իցէ, հրամայականն ևս լինի, իսկ թէ կրաւորակերպ իցէ, *եաց* փոխարկեա որպէս՝ *ողորմեաց*, *նայեաց*: Մի վրիպիցիս ի խրատուս, զի մի սխալիցիս, քանզի աղբիւրն, որ էր աներևոյթն, էր ողորմիլ, նայել, հրամայականն *եաց* փոխարկի, որբար՝ ողորմեաց, նայեաց և ոչ՝ եա, որպէս՝ ողորմեա, նայեա»⁴¹: Նշելով, որ իր ասածը վերաբերում է պարզ բայերին, անդրադառնում է նաև ուցանեմ ածանցավոր բայերին, որոնք հրամայականը կազմում է *ցո*-ով՝ «որպակ՝ կեցո, իսկ կրաւորականն ոչ ածանցի»⁴²: Հովհ. Ջուղայեցին արդի ըմբռնմամբ ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումների հրամայականների կազմության վերաբերյալ անում է ճշգրիտ դիտողություն, չնայած օրինակի համար վկայված բայերից երկուսն էլ կրավորակերպ են խոնարհվում ըստ գրաբարի բայի առանձնահատկությունների:

Հրամայական եղանակի համար Սիմեոն և Հովհ. Ջուղայեցիները ընդունում են ներկա և ապառնի ժամանակներ: Նրանց ներկայացրած հարացույցների⁴³ համեմատական քննությունից կարող ենք անել հետյալ դիտողությունները.

1. Երկուսն էլ ներկայի համար նշում են լա՛, լացե՛ք, մի՛ լանար, մի՛ լանայք⁴⁴ ձևերը իբրև ներգործականներ:

* Տե՛ս «Գիրք, որ կոչի քերականութիւն արարեալ և շարադրեցեալ ի Սիմեոն վարդապետ Ջուղայեցու», 1725, ի Կոստանդնուպոլիս: Գիրքը հրատարակվել է ուշ. տե՛ս Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 121:

³⁷ Տե՛ս Հ. Միրզոյան, Սիմեոն Ջուղայեցի, Եր., 1971, ցույցի, Սիմեոն Ջուղայեցի և Ոսկան Երևանցի, «Բանբեր Երևանի համալսարանի», No 3, 1978, էջ 186-192:

³⁸ Տե՛ս Սիմեոն Ջուղայեցի, նշվ. աշխ., էջ 70-111:

³⁹ Տե՛ս Հ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983:

⁴⁰ Այն մանրակրկիտ վերլուծության և բարձր գնահատականի է արժանացել ակադ. Գ. Զահուկյանի կողմից: Տե՛ս Գ. Զահուկյան, Գրաբարի քերականություն, էջ 150-159: Նա օգտագործել է Մատենադարանում եղած երկու ձեռագիր օրինակները: 1993 թ. պրոֆ. Հ. Միրզոյանը հրատարակում է Մրբուզի «Քերականութիւն ...» աշխատության քննական բնագիրը («Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 1, 1993, էջ 102-125), որը հնարավորություն է տալիս ձեռքի տակ ունենալ արժեքավոր նյութ՝ Հ. Ջուղայեցու լեզվաբանական հայացքները գնահատելու համար: Մենք օգտվել ենք քննական այդ բնագրից, որ որոշակի նյութ է ընձեռել մեզ հետաբերող հարցի կապակցությամբ:

⁴¹ Հ. Միրզոյան, Հովհաննես Ջուղայեցու «Քերականութիւն...»-ը, էջ 115:

⁴² Նույն տեղում:

⁴³ Մրբուզի ներկայացրած հարացույցը տե՛ս նույն տեղը, էջ 113-ում:

⁴⁴ Հ. Ջուղայեցու «Քերականութիւն...» քննական բնագրում Հ. Միրզոյանը նշում է յուս ուղղագրությամբ:

2. Ապառնի երկրորդ դեմքի համար բերում են լասջիր, լասցես, լասջիք ձևերը (Ս. Ջուղայեցին սահմանական ապառնու համար ք-ով ձևերը չի վկայակոչում): Ապառնի արգելականի համար Ս. Ջուղայեցին դնում է մի ձևույթը ստորադասական առաջին ապառնու ձևերի հետ՝ մի՛ լանայցես, մի՛ լանայցէք:

Իսկ Հովհ. Ջուղայեցին մի՛ ձևույթի հետ ստորադասական երկրորդ ապառնու բալաձևերն է դնում՝ մի՛ լասցես: Այն օգտագործում է նաև -ջիր, -ջիք-ով կառույցների հետ՝ մի լասջիր, մի՛ լասջիք:

3. I դեմքի համար Սիմեոն և Հովհ. Ջուղայեցիները նշում են լասցուք, ոչ լասցուք, իսկ Սիմեոն Ջուղայեցին նաև՝ մի՛ լանայցենք ձևերը:

4. III դեմքի համար Հովհ. Ջուղայեցին նշում է լասցեն, ոչ կամ մի՛ լասցեն ձևերը, իսկ Սիմեոն Ջուղայեցին՝ լասցէ, լասցեն, մի՛ լանայցէ, լանայցեն ձևերը:

Հետագայում հրամայականը նման ձևով է ներկայացվելու Գալանոսի կողմից, այն տարբերությամբ, որ ապառնի II դեմքի համար Ս. Ջուղայեցու հիշատակած լասջիր և լասցես ձևերից Գալանոսը տալիս է միայն -ջիր-ով ձևը:

Հովհ. Ջուղայեցին հիմնականում հեցվում է Ս. Ջուղայեցու ներկայացրած բալական հարացույցի վրա, այնուամենայնիվ կան տարբերություններ:

Խաչատուր Կարնեցին⁴⁵ հիմնականում հետևում է Հովհ. Հղովիմ և Կղ. Գալանոսին, ուստի նրա ներկայացրած հարացույցին չենք անդրադառնում:

Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների «Ռսկեայ դուոն դպրատան» կամ «Դուոն իմաստութեան»⁴⁶ աշխատության մեջ ներկայացված խոնարհման աղյուսակում փորձ է արվում առանձնացնել միայն բալական վերջավորությունները (այն ձևերը, որոնցում անկանոն և զարտուղի բայերը շեղվում են, բերվում են ~ նշանով):

Հրամայական

եա	ա ~		եաց
մի եր	մի՛ ար	մի ուր	մի՛ իր
եցէք	ացէք	էք	եցարուք
մի՛ էք	մի՛ այք	մի՛ ուք	մի՛ իք

Ինչպես տեսնում ենք, բոլոր դրական դիտողություններով և ճիշտ բալաձևերով հանդերձ, դեռևս վերոհիշյալ քերականություններում արհեստական կառույցները որոշակի տեղ են գրավում:

Լատինատիպ - բանասիրական քերականություններում միտում կա ավելի ճշգրիտ ներկայացնելու հայերենի քերականական իրողությունները, որը պիտի կատարվեր գրավոր և բանավոր աղբյուրների քննության հիման վրա: Ահա թե ինչու, բալաձևերից զատ, ուշադրություն է դարձվում նաև այդ ձևերի իմաստային կիրառություններին. իրողություն, որ բացակայում էր հունատիպ և լատինատիպ նախորդ ուղղությունների քերականություններում:

Օրյոդերը⁴⁷ զանազանում է կանոնավոր (regularia) և անկանոն (irregularia) բայեր, որոնց խոնարհումը տալիս է միասին՝ ըստ լծորդությունների:

Հրամայական եղանակի համար նշում է ներկա և ապառնի ժամանակներ: Ներկայի համար վկայում է գովեա՛, գովեցէք և ժխտական խոնարհման (negative) մի՛ գովեր, մի՛ գովէք բալաձևեր, ապառնու տակ -ջիր, -ջիք-ով կառույցները՝ գովեսջիր, գովեսջիք: «Օրյոդերը գերադասում է հիշատակել եղածը՝ առանց արհեստական կազմությունների», նշելով նաև այն, ինչ կա «ծողովորդական լեզվում (in vulgar sermone)»⁴⁸: Այս-

⁴⁵ Տե՛ս «Գիրք քերականութեան արարեալ և շարադրեցեալ ի Խաչատուրե Արզրումեցոյ», Յալիկոնայ, 1696, էջ 69-71:

⁴⁶ «Վանանդեցիք Մատթեոս և Ղուկաս, Դուոն իմաստութեան կամ ոսկեայ դուոն դպրատան», Ամստերդամ, 1699, էջ 19:

⁴⁷ Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 173-174:

⁴⁸ Տե՛ս Յոհան Օրյոդեր, Արամեան լեզուին գանձ, Thesaurus linguae armeniacae antiquae et hodiernae cum varia praxios matciria, Ամստերդամ, 1711, խոնարհման աղյուսակը տե՛ս էջ 143-157:

⁴⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 194:

պիստվ -/ լծորդության բայերի հրամայական ներկայի համար խօսեա՛ց vel խօսեա՛ր՝ ձևերի հետ նշում է նաև *խօսիր* ձևը, որ բնորոշ է խոսակցական լեզվին: Օրյոդերի կողմից ներկայացված հրամայական եղանակի հարացույցը ճշգրիտ է ներկայացնում գրաբարի բային բնորոշ կառույցները: Բայց այն գերծ չէ արհեստականություններից. օրինակ՝ -ու- լծորդության (առնույ) բայերի համար նա հրամայական ապառնու ժխտական կառույց է տարբերակել (*ոց՝ մի՛ անցես, մի՛ անցէք*), որ համադրում է *անջիր, անջիք* դրական ձևերին⁶⁰: Այնուամենայնիվ դիմախից տարբերակումը Օրյոդերի մոտ հստակ է:

Օրյոդերը որոշակի ուղղումներ է մտցնում Գալանոսի կողմից ներկայացված անկանոն բայերի ոչ միայն բայաշարքում, այլև հրամայականի ձևերում (օրինակ՝ թաքչիմ, մարտնչիմ, կորնչիմ, հանգչիմ բայերը Գալանոսը հիշատակում է առանց սուկածանցների՝ թաքիմ, մարտիմ ևն, չնայած Օրյոդերը դառնալ - դարձ, բառնալ - բարձ, բանալ - բաց, գալ - եկ, կեալ - կեաց ճիշտ ձևերի կողքին կարող է վկայել դողալ - դողա (կամ դողացիր) ձևը իբրև արտուղի խոնարհման բայ):

1714 թ. Հակոբ Վիլլտը Հոմման յույս է ընծայում լատիներեն – հայերեն բառարանը⁶¹: Բառարանի սկզբում կցված է հայերենի քերականության համառոտ ակնարկ: Բայի եղանակաժամանակային համակարգը կառուցում է Գալանոսի սկզբունքներով:

Հրամայական եղանակի համար, ի հակադրություն նախորդ լատինաբան հեղինակների, չի առանձնացնում հրամայական ապառնի:

Մ. Սեբաստացին բայի եղանակները բաժանում է երկու խմբի. 1) եղանակներ, որոնք գործողությունը արտահայտում են արձակաբար (սահմանականը և աներևույթը) և 2) եղանակներ, որոնք գործողությունն արտահայտում են *«վերաբերությանը իլիքը»* (հրամայելով՝ հրամայականը, ըղձալով՝ ըղձականը, թեությանը ու կախմամբ՝ ստորակցականը)⁶²:

Հրամայականի համար ներկայացրած հարացույցը Հոլովի ներկայացրած հարացույցի տառացի կրկնությունն է⁶³: Հեղինակը բացատրում է, որ սահմանական ապառնու և հրամայական ապառնու բայաձևերը պետք է զանազանել շեշտադրությամբ, քանի որ հրամայական ապառնին մշտապես շեշտված է:

Ի հակադրություն նախորդ քերականների՝ Մ. Սեբաստացին դիտողություն է անում նաև հրամայական եղանակի բայաձևերի իմաստային առանձնահատկությունների մասին՝ նշելով հրամայական, մաղթողական, խրատական, պահանջողական (հմմտ.՝ «ուսիր զիմաստութիւն, ոչ զի ասիցիս, այլ զի իցես իմաստուն ... Ուսուցիք հետևողաց ձերոց ...» հրամայականներ⁶⁴):

Բաղդասար Դպիրը⁶⁵ եղանակներն անվանում է «որակություն»: Նա հրամայականի համար տարբերում է երկու տեսակի բայեր՝ «նոյնականք» և «կողմնականք»:

Նոյնական է կոչում այն բայերը, որոնք հրամայականի եզակի 2-րդ դեմքում ունեն *-ա՛, -եա՛, -եա՛ցյ, -ր, -ո*, վերջավորությունները. կողմնական է համարում այն բայերը, որոնք հրամայականները վերջավորություն չունեն, այլ համընկնում են բայարմատի հետ (ա՛ծ, գի՛տ, հե՛ղ) կամ կատարյալի հիմքի հետ (լնում- լից):

Ընդհանրացնելով լատինատիպ քերականների՝ հրամայական եղանակի համար ներկայացրած բայաձևերի մեր քննությունը՝ կարող ենք նշել.

1. Բացի Ֆր. Ռիվոլայից, որ բայի համար զանազանում է 4 եղանակ, մյուս քերականներն ընդունում են հինգ եղանակ: Հրամայական եղանակի համար նշում են ներկա և ապառնի ժամանակներ (բացի Հ. Վիլլտից): Արդի ըմբռնմամբ՝ բուն և արգելական հրամայական բայաձևերը վկայակոչում են բոլոր հեղինակները՝ ոչ վերոհիշյալ անվանումներով: Նկատելի է միտում ազատվելու արհեստական կառույցներից. բայց դրանք դեռ տիրապետող են այդ հարացույցներում:

⁶⁰ Տե՛ս Յ. Օրյոդեր, նշվ. աշխ., էջ 136:

⁶¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 208-209:

⁶² Տե՛ս Միխայիլ Սեբաստացի, Քերականություն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 313:

⁶³ Տե՛ս նույն տեղը, էջ 46-49:

⁶⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 314:

⁶⁵ Տե՛ս Պաղդասար Դպիր, Պարզաբանություն քերականության կարճատես և դիրքիմաց, Կ. Պոլիս, 1771, էջ 83-84:

2. Ստորադասական առաջին և երկրորդ ապառնիների բայաձևերը՝ իբրև հրամայական ապառնի, երբեմն նաև ներկա են ներկայացվում, ըստ որում և՛ դրական խոնարհման ձևերը, և՛ մի-ով ու ոչ-ով հարադրված ժխտական խոնարհման կառույցները, որոնց անշեշտ ձևերը տրվում են նաև ստորադասական և սահմանական ապառնիների համար:

3. -ջիր, -ջիք-ով կառույցները վկայակոչված են բոլոր քերականների կողմից. ումանք բերում են նաև նրանց ժխտական խոնարհման ձևերը:

4. Հրամայական եղանակի դիմային առանձնահատկությունների ոչ հստակ պատկերացման պատճառով հարացույցներում շարունակում են տեղ գտնել նաև ստորադասական եղանակի առաջին և երրորդ դեմքի բայաձևերը: Միայն Օրյոդերն է, որ վկայակոչում է երկրորդ դեմքի բայաձևեր:

5. Ջանգազանով սեռի կարգը և ներկայացնելով կրավորական խոնարհման հարացույցը՝ նրանք կրավորական խոնարհման ճշգրիտ կառույցների կողքին տեղ են հատկացնում նաև ցցուն արհեստական ձևերի (օրինակ՝ Ոսկան Երևանցին առնուլ բայի կրավորական ներկայի համար նշում է առնանեաց կամ առնանի, առնանիցի կամ առցի, առնանիցուք կամ առցիմք, առնանիջիք կամ առիջիք, առնանիցին կամ առցին):

6. Հրամայականի կազմության վերաբերյալ կան ճշգրիտ և նուրբ դիտողություններ: Սրանք վկայում են, որ վերոհիշյալ քերականները միտում են ունեցել իրապես ներկայացնելու գրաբարի քերականությունը:

7. Լատինատիպ բանասիրական քերականություններում (Մ. Սեբաստացի) ուշադրություն է դարձվում նաև հրամայական եղանակի բայաձևերի իմաստային առանձնահատկություններին: Մ. Սեբաստացին համեմատում է հրամայականի՝ ուսիր և ուսուցչիր բայաձևերի կիրառությունները նախադասության մեջ, և նրա նախնական բացատրությունից ընկալում ենք, որ ուսիր-ը խրատական, իսկ ուսուցչիր-ը պահանջողական իմաստներով են գործածված: Սա որոշակի նվաճում էր նաև ջիք-ով կառույցների ընկալման տեսանկյունից:

Հունալատինատիպ քերականություններում բայի հրամայական եղանակի համար ներկայացված հարացույցների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ նրանք առլեցուն են արհեստական, գրաբարին ոչ բնորոշ կառույցներով: Նրանցում դեռևս տարբերակված չեն հրամայական և ստորադասական եղանակի բայաձևերի սահմանները, վերջիններս բերվում են իբրև հրամայականի ձևեր (երբեմն նույնիսկ մի՛ արգելականի հետ):

Հունալատինատիպ քերականները ճիշտ չեն ընկալել հրամայական եղանակի դիմային առանձնահատկությունը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ստորադասական եղանակի ոչ միայն II, այլև I և III դեմքի բայաձևերն են տեղ գտել հրամայական եղանակի հարացույցում:

Նրանք հրամայական եղանակի բայաձևերին վերագրել են երկու պարզ ժամանակ՝ ներկա (որի տակ նշվում են բուն և արգելական հրամայականի կառույցները) և ապառնի (որի տակ հիմնականում հիշատակվում են -ջիր, -ջիք-ով ձևերը):

Լատինատիպ - բանասիրական քերականություններում կան մասնակի դիտողություններ հրամայական եղանակի բայաձևերի իմաստային առանձնահատկությունների վերաբերյալ:

АШХ. Л. ЮЗБАШЯН - Характеристика повелительного наклонения древнеармянского языка в трудах армянских грамматистов V-XVIII вв. - В статье рассматриваются характеристики форм и значений повелительного наклонения древнеармянского языка, представленные в грамматиках V-XVIII вв. Представители грекофильской школы и авторы латинизированных грамматик в повелительном наклонении выделяли настоящее и будущее времена, причем к будущему времени относили временные формы сослагательного наклонения.

Вследствие неправильного понимания грамматических категорий наклонения и времени, нечеткого выделения их граммем и форм, в парадигму повелительного наклонения грамматисты включали искусственные образования, чуждые грабару.